

վեցերորդ
փուչիկ



Երդիկէն իջաւ
սարդիկ մը․
սահեցաւ վար,
վար, վար,
բարձրացաւ վեր,
վեր, վեր,
գնաց դէպի աջ, աջ, աջ,
դարձաւ դէպի ձախ, ձախ, ձախ...



վարէն անցաւ թրթուրիկը,
վեր նայեցաւ ու ըսաւ.

– սարդի՛կ, սարդի՛կ, վա՛ր իջիր,
եկուր խաղա՛նք միասին...

– շա՜տ զբաղած եմ ընկերս,
ժամանակ չունիմ քերելու գլուխս, պէտք է հիւսեմ
ոստայնս...



պատասխանեց
սեւուլիկ սարդիկը,



շարունակելով հիւսքը,
մէկ վար, մէկ վեր, մէկ աջ, մէկ ճախ,
երբեմն ալ շեղակի...

վարէն անցաւ խխունջիկը,
վեր նայեցաւ ու ըսաւ.

- սարդի՛կ, սարդի՛կ, վա՛ր իջիր,
եկուր խաղա՛նք միասին...

- շա՜տ զբաղած եմ ընկերս,
ժամանակ չունիմ



ցերեկը գլուխս,
պէտք է հիւսեմ
ոստայնս...
պատասխանեց
սեւուլիկ սարդիկը,



Շարունակելով
ճիւաղը,
մէկ վար, մէկ վեր, մէկ աջ, մէկ ձախ,
երբեմն ալ շեղակի...

եւ հիւսէ՜ց ... եւ հիւսէ՜ց ...
Նախշուն ոստայն մը հիւսեց...
ծրծուրիկը տեսաւ, հիացա՜ւ ... հիանալի՜...
խխունջիկը տեսաւ, սքանչացա՜ւ... սքանչելի՜...





իսկ Սեւուլիկ Սարդիկը
հպա՜րտ հպարտ
բազմեցաւ ոսպայնին ճի՛շդ մէջտեղը,
հանգի՜ստ քերեց գլուխը...







Սարդիկ, Սարդիկ սեւուլիկ,
ունիս ութը հատ ոտիկ.
ութը մազոտ ոտիկին,
քանի՞ զոյգ կարմիր կօշիկ.



Սարդիկ, Սարդիկ սեւուլիկ,
ունիս ութը հատ տոտիկ.
չորս զոյգ ալ կարմիր կօշիկ,
բայց կը խաղաս միշտ բոպիկ.


ձեռագո՞րծ, թէ ստեղծագործ .



պոփիկները համրեյի ,

կոշիկները հագցույի .